ԿԱՐԾԻՔ

Թ.00.01 – փիլիսոփայական գիտությունների գիտական աստիճանի հայցող

ՀԱՅԱՐՓԻ ԳԱԳԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ

«ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԻՇԵԼ ՖՈՒԿՈՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

ատենախոսության վերաբերյալ

Հայարփի Գագիկի Սահակյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից կոնտինենտալ փիլիսոփայության առանցքային և տեսականորեն բարդ հիմնահարցերից մեկին՝ սուբյեկտի ձևավորման, վերակազմավորման և կառավարելիության խնդրին Միշել Ֆուկոյի փիլիսոփայական ժառանգության համատեքստում: Այս իմաստով թեմայի ընտրությունը միանգամայն արդիական է: Սուբյեկտի հիմնահարցը դասական փիլիսոփայության մեջ սովորաբար ձևակերպվել է որպես բանականության, ինքնագիտակցության, ինքնավարության և բարոյական պատասխանատվության հիմնահարց: Սակայն 20-րդ դարի երկրորդ կեսից, հատկապես Ֆուկոյի փիլիսոփայության մեջ, այս ըմբռնումը ենթարկվում է արմատական վերաիմաստավորման: Այս համատեքստում սուբյեկտն այլևս չի դիտարկվում որպես նախապես տրված, ինքնաբավ և սոցիալական հարաբերություններից դուրս գտնվող էություն, այլ որպես դիսկուրսիվ, ինստիտուցիոնալ, կարգապահական և կենսաքաղաքական հարաբերությունների մեջ դիրքավորված միավոր:

Հայարփի Սահակյանն իր աշխատանքում այս ֆուկոյան խնդրադրությունը տեղափոխում է ժամանակակից սոցիալ-տեխնոլոգիական իրականության հարթություն՝ փորձելով ցույց տալ, որ սուբյեկտի ձևավորումը 21-րդ դարում այլևս չի կարող ամբողջությամբ բացատրվել միայն դասական կարգապահական և կենսաքաղաքական մոդելներով: Թվայնացման, տվյալահեն կառավարման, ալգորիթմիկ կանխատեսման, վարքագծային պրոֆիլավորման և ռիսկերի հաշվարկման պայմաններում սուբյեկտի կառուցման մեխանիզմները ձեռք են բերում

նոր որակ: Ատենախոսության հիմնական նպատակադրությունն այն է, որ ֆուկոյան վերլուծական գործիքակազմը պետք է ընդլայնել՝ ներառելով ժամանակային կարգապահության, կանխատեսական կառավարելիության, տվյալայնացված մարմնի, ալգորիթմիկ սուբյեկտի և պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի հասկացություններին: Այս առումով աշխատանքն ունի ոչ միայն պատմափիլիսոփայական, այլև սոցիալ-փիլիսոփայական, բարոյագիտական և մեթոդաբանական նշանակություն:

Ատենախոսության առաջին՝ **«Սուբյեկտն իշխանական-դիսկուրսիվ հարաբերությունների համատեքստում»** գլխում հեղինակը փորձում է ցույց տալ, որ սուբյեկտը չպետք է հասկանալ որպես մարդու ներքին էության կամ հոգեբանական ինքնության արտահայտություն, այլ որպես իշխանություն-գիտելիք հարաբերությունների դաշտում ձևավորվող կառուցվածքային դիրք: Այս գլխում քննարկվում են սուբյեկտի դասական մեկնաբանությունները, իշխանության հարաբերութենական ըմբռնումը, կարգապահական իշխանությունը, կենսաքաղաքական կառավարումը և ժամանակային կարգապահության գաղափարը:

Երկրորդ գլուխը՝ **«Սուբյեկտի գործունեությունը. դիմադրություն և ինքնակերտում»**, նվիրված է սուբյեկտի ակտիվության, դիմադրության, ազատության, ինքնակերտման և բարոյական պատասխանատվության հնարավորությանը իշխանական հարաբերությունների ներսում: Այստեղ հեղինակը փորձում է դուրս գալ սուբյեկտի զուտ ենթարկման մոդելից և ցույց տալ, որ սուբյեկտը, լինելով իշխանական հարաբերությունների արդյունք, միաժամանակ կարող է հանդես գալ որպես ինքնակարգավորման, դիմադրության և պատասխանատվության կրող: Հատկապես ուշագրավ են ալգորիթմիկ սուբյեկտի և պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի վերաբերյալ ենթագլուխները, որտեղ աշխատանքը առավել ակնհայտորեն դուրս է գալիս Ֆուկոյի դասական մեկնաբանության շրջանակից և փորձում է արդիականացնել ֆուկոյան խնդրադրությունը ժամանակակից թվային պայմաններում:

Ատենախոսության գիտական նորույթը, ինչպես ներկայացված է սեղմագրում, հիմնականում կապված է այն հանգամանքի հետ, որ սուբյեկտի ձևավորման խնդիրը քննվում է ոչ միայն կարգապահական և կենսաքաղաքական իշխանության սահմաններում, այլև ժամանակային, կանխատեսական և տվյալահեն կառավարելիության համատեքստում: Հեղինակը առաջադրում է մի շարք հասկացություններ՝ **«ժամանակային կարգապահություն»**, **«տվյալայնացված մարմին»**, **«ալգորիթմային գործակարգեր»**, **«ալգորիթմիկ սուբյեկտ»**, **«պատասխանատու փոխկախյալ սուբյեկտ»**, որոնք նախատեսված են իշխանության ժամանակակից ձևափոխությունները վերլուծելու համար:

Ատենախոսության դրական կողմերից է այն, որ հեղինակը թեման չի սահմանափակում Ֆուկոյի տեքստերի մեկնաբանությամբ: Նա փորձում է Ֆուկոյի տեսական ժառանգությունը գործադրել ժամանակակից հասարակության այնպիսի երևույթների վերլուծության համար, ինչպիսիք են թվային պրոֆիլավորումը, ռիսկերի կանխատեսումը, ինքնաչափումը, ինքնաօպտիմալացումը, տվյալահեն կառավարումը և ալգորիթմիկ որոշումների անթափանցությունը: Այս մոտեցումը հատկապես կարևոր է այն պատճառով, որ ժամանակակից կառավարման ձևերը հաճախ այլևս չեն գործում միայն տեսանելի հարկադրանքի, կարգապահական վերահսկողության կամ իրավական արգելքի միջոցով: Դրանք գործում են տվյալների, ցուցանիշների, կանխատեսումների, ռեյտինգների, ռիսկային պրոֆիլների և վարքագծային սցենարների միջոցով: Հետևաբար սուբյեկտը ձևավորվում է ոչ միայն որպես ներկա գործողության կրող, այլև որպես ապագա հավանական վարքի հաշվարկելի միավոր:

Ուշագրավ է նաև ատենախոսության լեզվական և հայեցակարգային ներդրումը հայալեզու փիլիսոփայական դաշտում: Ֆուկոյի փիլիսոփայության որոշ առանցքային հասկացություններ հայերեն փիլիսոփայական լեզվում դեռևս ամբողջությամբ հաստատված չեն: Այս առումով ատենախոսությունը նպաստում է հայերենով սուբյեկտայնության, իշխանության, կառավարելիության,

կենսաքաղաքականության, ալգորիթմիկ կառավարման և տվյալահեն մարմնականության վերաբերյալ եզրութաբանական բառապաշարի ձևավորմանը:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը հիմնականում ֆուկոյան քննադատական վերլուծությունն է: Հեղինակը կիրառում է դիսկուրսիվ, կառուցվածքային և սոցիալ-փիլիսոփայական վերլուծության եղանակներ: Միաժամանակ, ալգորիթմիկ կառավարման, տվյալայնացված մարմնի և պատասխանատվության հարցերի քննարկումը աշխատանքին հաղորդում է միջառարկայական բնույթ: Ատենախոսության սեղմագրում նշվում է, որ հեղինակը սուբյեկտի խնդիրը դիտարկում է ֆուկոյան ավանդույթի շարունակության և ժամանակակից վերաիմաստավորման տրամաբանությամբ:

Այս ամենի հետ մեկտեղ, աշխատանքը զերծ չէ որոշ դիտողություններից և տեսական հստակեցման կարիք ունեցող խնդիրներից: Դրանք չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր գիտական արժեքը, սակայն կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների և աշխատանքի հնարավոր վերամշակման կամ մենագրության տեսքով հրապարակման համար:

Դիտողություններ և առաջարկություններ

1. «Ժամանակային կարգապահություն» հասկացությունը կարիք ունի առավել հստակ սահմանազատման:

Հեղինակը ատենախոսության տարբեր հատվածներում պնդում է, որ ժամանակակից կառավարելիության պայմաններում իշխանության առանցքը տարածական վերահսկումից տեղափոխվում է դեպի ապագայի հաշվարկ, ռիսկերի կառավարում և հավանական վարքագծի կանխատեսում: Այս միտքը, ինքնին, տեսականորեն ուշագրավ է: Սակայն խնդիրն այն է, որ աշխատանքի մեջ միշտ չէ, որ պարզ է, թե արդյոք «ժամանակային կարգապահությունը» ներկայացվում է որպես կարգապահական իշխանության նոր փուլ, կենսաքաղաքականության ներքին

վերաձևավորում, անվտանգության մեխանիզմների շարունակություն, թե որակապես նոր իշխանական ռեժիմ: Օրինակ՝ հեղինակը նշում է, որ ժամանակային կարգապահությունը ցույց է տալիս «վերահսկողության առանցքի տեղաշարժը տարածական կարգավորումից դեպի ապագայի հաշվարկ և ռիսկերի կառավարում» *(Ստենախոսություն, Ներածություն, էջ 8)*: Սակայն եթե կարգապահական իշխանությունն արդեն իսկ ներառում էր ժամանակի կազմակերպում, ռիթմավորում, կրկնություն, օրակարգի կառավարում և մարմնի ժամանակային վարժեցում, ապա անհրաժեշտ էր առավել հստակ ցույց տալ, թե ինչ է ավելացնում «ժամանակային կարգապահություն» հասկացությունը ֆուկոյան կարգապահության արդեն իսկ հայտնի ժամանակային չափմանը: Այլ կերպ ասած՝ աշխատանքում երբեմն նոր հասկացության առաջադրումը նախորդում է դրա անհրաժեշտության բավարար հիմնավորմանը:

2. Ֆուկոյից դեպի ալգորիթմիկ կառավարելիություն անցումը մեթոդաբանական լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Աշխատանքում հեղինակը փորձում է Ֆուկոյի իշխանություն-գիտելիք և կառավարելիություն հասկացությունները տեղափոխել տվյալահեն և ալգորիթմիկ հասարակության վերլուծության դաշտ: Այս մոտեցումը հետաքրքիր է և տեսականորեն խոստումնալից: Այնուամենայնիվ, անհրաժեշտ էր առավել մանրամասն պարզաբանել, թե ինչ մեթոդաբանական հիմքով է հնարավոր Ֆուկոյի պատմականորեն կոնկրետ վերլուծությունները կիրառել այնպիսի երևույթների նկատմամբ, որոնք ձևավորվել են Ֆուկոյի մահից հետո՝ մեծ տվյալների, ալգորիթմիկ կանխատեսման և թվային հարթակների պայմաններում: Աշխատանքում նշվում է, որ հետազոտությունը կառուցվում է ֆուկոյան «իշխանություն-գիտելիք» փոխկապակցման ընդլայնման վրա և տեղափոխվում է տվյալահեն ու ալգորիթմիկ միջավայրերի քննության դաշտ *(Ստենախոսություն, Ներածություն, էջ 9)*: Սակայն հենց այդ «ընդլայնման» մեթոդաբանական կարգավիճակը պահանջում էր առավել

մանրամասն բացատրություն. արդյո՞ք հեղինակը մեկնաբանում է Ֆուկոյին, կիրառո՞ւմ է Ֆուկոյին, թե՞ փորձում է կառուցել հետֆուկոյան տեսական շրջանակ: Այս տարբերակումը աշխատանքի մեջ միշտ չէ, որ հստակ է:

3. «Ալգորիթմիկ սուբյեկտ» հասկացության ինքնուրույնությունը ամբողջությամբ պարզաբանված չէ:

Ատենախոսության *«2.4. Ալգորիթմիկ սուբյեկտ. կառավարելիության կանխատեսական գործակարգերը և սուբյեկտայնության վերակազմավորումը»* բաժնում «ալգորիթմիկ սուբյեկտը» ներկայացվում է որպես տվյալների, պրոֆիլավորման, հաշվարկելիության և ապագա վարքագծի կանխատեսման միջոցով վերակազմավորվող սուբյեկտ: Սակայն միջազգային ակադեմիական գրականության մեջ արդեն առկա են հարակից հասկացություններ՝ digital subject, data subject, dividual, quantified self, algorithmic identity, surveillant subject և այլն: Հետևաբար ցանկալի կլիներ, որ հեղինակը առավել հստակ ցույց տար, թե «ալգորիթմիկ սուբյեկտ» հասկացությունը պարզապես այդ քննարկումների հայերեն վերարտադրությո՞ւնն է, թե՞ ունի ինքնուրույն տեսական բովանդակություն և բացատրական առավելություն:

4. Դեկարտից և Կանտից դեպի Ֆուկո անցումը որոշ չափով ուրվագծային (պարզեցված) է և կարիք ունի ավելի զգույշ փիլիսոփայական միջնորդավորման:

Հեղինակը փորձում է ցույց տալ, որ Դեկարտի մոտ սուբյեկտը հանդես է գալիս որպես մտածելու նվազագույն և անհերքելի դիրք, իսկ Կանտի մոտ՝ որպես փորձառության հնարավորության ձևական պայման *(Ատենախոսություն, Գլուխ 1, էջ 23-24)*: Այնուհետև Ֆուկոյի միջոցով այդ սուբյեկտը պատմականացվում և դիսկուրսիվորեն պայմանավորվում է *(Ատենախոսություն, Գլուխ 1, էջ 29)*: Այս կառուցվածքը ընդհանուր առմամբ հասկանալի է, սակայն աշխատանքի մեջ դասական փիլիսոփայության ներքին տարբերությունները երբեմն չափազանց արագ

են ենթարկվում ֆուկոյան քննադատական շրջանակին: Օրինակ՝ Կանտի «տրանսցենդենտալ սուբյեկտը» և Ֆուկոյի կողմից քննադատվող «մարդաբանական կրկնակը» նույն մակարդակի հասկացություններ չեն: Եթե դրանք նույն շարքում են դրվում, անհրաժեշտ էր շատ ավելի հստակ ցույց տալ, թե ինչ իմաստով է Կանտի տրանսցենդենտալ սուբյեկտը նախապատրաստում այն մարդաբանական փակուղին, որը Ֆուկոն փորձում է հաղթահարել:

5. Աշխատանքի մեջ «իշխանություն», «կառավարում» և «կառավարելիություն» հասկացությունները միշտ չէ, որ բավականաչափ հստակ են տարբերակվում:

Ֆուկոյի փիլիսոփայության համար կարևոր է տարբերակել իշխանությունը որպես հարաբերությունների դաշտ, կառավարումը որպես վարքի ուղղորդման ռացիոնալություն և կառավարելիությունը որպես այդ ուղղորդման պատմականորեն ձևավորված եղանակների ամբողջություն: Ատենախոսության մեջ այս տարբերակումը առկա է, սակայն ոչ միշտ է հետևողականորեն պահպանվում: Մի շարք հատվածներում «իշխանություն», «կառավարում», «կառավարելիություն», «կարգավորում» և «վերահսկողություն» հասկացությունները երբեմն գործածվում են չափազանց մոտ իմաստներով: Եթե «իշխանություն» և «կառավարելիություն» հասկացությունների միջև սահմանը բավականաչափ հստակ չէ, ապա դժվարանում է նաև հասկանալը, թե արդյո՞ք ալգորիթմիկ կառավարելիությունը իշխանության նոր ռեժիմ է, թե կառավարման տեխնիկական միջավայրի փոփոխություն:

6. «Պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» հայեցակարգը աշխատանքի ամենահավակնոտ, բայց նաև ամենաքիչ հիմնավորված հատվածներից է:

2.5 ենթագլխում հեղինակը նշում է, որ ալգորիթմիկ կառավարելիության պայմաններում բարոյականության հիմքը տեղափոխվում է ինքնավարությունից դեպի փոխկախվածություն, և այդ սահմանային դիրքում առաջադրվում է «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» հայեցակարգը *(Ատենախոսություն, 2.5*

ենթագլուխ, էջ 120): Սակայն այստեղ առաջանում է սկզբունքային խնդիր. եթե սուբյեկտը ձևավորվում է տվյալահեն, անթափանց, մասամբ ավտոմատացված և կանխատեսական գործակարգերի ներսում, ապա ինչպե՞ս է նա դառնում պատասխանատու: Աշխատանքը ցույց է տալիս, որ սուբյեկտը լիովին ինքնիշխան չէ, բայց ամբողջությամբ էլ չի տարալուծվում համակարգում: Սակայն այս միջանկյալ դիրքը դեռ բավարար չէ պատասխանատվության տեսական մոդել կառուցելու համար: Անհրաժեշտ էր ավելի հստակ պատասխանել՝ պատասխանատվությունը այստեղ անհատակա՞ն է, հարաբերակա՞ն, ինստիտուցիոնա՞լ, թե՞ ցանցային: Առանց այս տարբերակման «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտը» կարող է թվալ ավելի շատ տեսականորեն գրավիչ ձևակերպում, քան փիլիսոփայորեն բավարար չափով հիմնավորված հասկացություն:

7. Դիմադրության գաղափարը ալգորիթմիկ կառավարելիության համատեքստում մնում է չափազանց ընդհանրական և երբեմն փոխաբերական:

Ատենախոսության մեջ դիմադրությունը մեկնաբանվում է որպես իշխանության ներքին գործառույթ *(Ատենախոսություն, 2.1. ենթագլուխ)*, և հեղինակը փորձում է այն տարածել նաև տվյալահեն և կանխատեսական միջավայրի վրա: Օրինակ՝ աշխատանքում խոսվում է տվյալային հետքի անորոշացման, վարքագծի կանխատեսելիության խախտման և «չափում-ժամանակ» հարթության մեջ դիմադրության տեղափոխման մասին *(Ատենախոսություն, 2.1 ենթագլուխ, էջ 84)*: Սա հետաքրքիր մոտեցում է, բայց դեռևս բավարար չափով հիմնավորված չէ: Անհասկանալի է մնում, թե դիմադրության այս ձևերը որքանով են իրականում ազատության դրսևորումներ, որքանով՝ համակարգի ներսում թույլատրելի շեղումներ, և որքանով՝ հենց նույն ալգորիթմիկ միջավայրի կողմից վերակոդավորվող վարքային տարբերակներ: Օրինակ՝ եթե սուբյեկտը խախտում է կանխատեսելիությունը, արդյո՞ք նա իսկապես դիմադրում է, թե՞ պարզապես արտադրում է նոր տվյալ, որը հետագայում ներառվելու է կանխատեսական մոդելի

մեջ: Այս հարցը աշխատանքի մեջ պետք է դառնար ավելի ուղիղ և խորացված քննարկման առարկա:

8. Հայկական սոցիալական միջավայրին վերաբերող կիրառական պնդումները պահանջում են առավել կոնկրետ հիմնավորում:

Ատենախոսության մեջ նշվում է, որ հիմնահարցն արդիական է հատկապես հայաստանյան սոցիալական միջավայրում, քանի որ կրթության, առողջապահության, իրավունքի և վարչարարության ոլորտներում զարգանում են ինստիտուցիոնալ գնահատման, կարգավորման և թվայնացման մեխանիզմները *(Ատենախոսություն, Ներածություն, էջ 4)*: Այս պնդումը համոզիչ է որպես ելակետ, սակայն ատենախոսության հիմնական շարադրանքում հայաստանյան համատեքստը, ըստ էության, չի դառնում առանձին վերլուծության առարկա: Եթե աշխատանքը հավակնում է ունենալ նաև կիրառական նշանակություն, ապա ցանկալի կլիներ գոնե մեկ ոլորտի՝ օրինակ առողջապահության, կրթական գնահատման կամ վարչարարական թվայնացման, ավելի կոնկրետ քննություն:

9. Որոշ տեղերում աշխատանքի լեզուն և հասկացությունների խտությունը դժվարացնում են հիմնական փաստարկի հետևողական ընկալումը: Ատենախոսությունը գրված է տեսականորեն հագեցած, երբեմն բարդ լեզվով, ինչը համապատասխանում է թեմայի բարդությանը: Թեև կիրառված լեզվական ոճի նման հարստությունը կարելի էր դիտարկել որպես առավելություն, սակայն այս հանգամանքը երբեմն դժվարացնում է հեղինակի փաստարկմանը հետևելը: Որոշ հատվածներում հասկացությունների խտությունն այնքան մեծ է, որ ընթերցողի համար դժվարանում է տարբերակել՝ տվյալ պահին հեղինակը նկարագրո՞ւմ է Ֆուկոյի դիրքորոշումը, վերակառուցո՞ւմ է հետֆուկոյան գրականությունը, թե՞ առաջադրում է սեփական թեզը:

Նշված դիտողությունները, սակայն, ունեն հիմնականում ճշգրտող և ուղղորդող նպատակ: Դրանք չեն ստվերում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքը: Ատենախոսությունը կատարված է տեսական պատշաճ մակարդակով, ունի հստակ կառուցվածք, հիմնավորված թեմատիկ ընտրություն, հարուստ գրական հենք և արդիական գիտական ուղղվածություն: Հեղինակը կարողացել է Ֆուկոյի փիլիսոփայական ժառանգությունը կապել ժամանակակից տեխնոլոգիական հասարակության հիմնահարցերի հետ և առաջադրել մի շարք հասկացություններ, որոնք կարող են օգտակար լինել հետագա սոցիալ-փիլիսոփայական, բարոյագիտական և քաղաքական-փիլիսոփայական ուսումնասիրությունների համար:

Եզրափակելով՝ կարելի է արձանագրել, որ Հայարփի Գագիկի Սահակյանի **«Սուբյեկտի հիմնահարցը Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ»** թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական և արդիական գիտական ուսումնասիրություն է: Այն համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Թ.00.01 - «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Լ. Գ. Բաբաջանյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՀՊՄՀ գիտական քարտուղար Ա.Հ. Հովհաննիսյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու,

դոցենտ **Լ. Գ. Բաբաջանյան**

26.05.2026